

ԲԱՆԱՎԵՃԵՐ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ДИСКУССИИ И ОБСУЖДЕНИЯ

ՍԵՌԱԿԱՆ ՀՈԼՈՎԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Պ. Մ. ՊՈՂՈՍՅԱՆ

Թեև ամեն մի գիտության նպատակն է հնարավորին չափ լիովին, անհրաժեշտ խորությամբ ու բազմակողմանիորեն ճանաչել իր ուսումնասիրության առարկան, սակայն ոչ մի գիտություն էլ չի հասնում իր վերջնականին: Սերունդների ջանքերով ժամանակների փոփոխության ու գիտության ընդհանուր զարգացման մակարդակի համեմատ՝ գիտության այս կամ այն բնագավառում առաջ են գալիս ուսումնասիրության նոր մեթոդներ ու եղանակներ, նոր հնարավորություններ, միևնույն նյութն ուսումնասիրելու նոր նպատակներ: Այս պատճառով էլ ոչ մի գիտություն չի հասնում վերջնական եզրահանգումների, բացարձակ ճշմարտությունների: Ամեն մի գիտության ձեռք բերած նվաճումը հարաբերական վերջնական է, հարաբերական բացարձակ: Գիտությունն աշխարհն է, որ ամեն օր կառուցվում ու վերակառուցվում է, ինքնորոգվում ու վերանորոգվում է, և երբեք չի դրվում նրա վերջին քարը: Գիտության առաջ, կարելի է ասել, ամեն օր ծառանում է նրա համար կենսական նշանակություն ունեցող մի հարց. այս կամ այն երևույթը գիտության արդի եզրահանգումներում արդյոք ճիշտ է արտացոլվում, սերունդների ջանքերով բացահայտված և արդեն ընդունված այս կամ այն ճշմարտությունը գիտության ներկա մակարդակի տեսակետից արդյոք բոլորովին է քննություն, թե ոչ:

Մեր ժամանակներում ինչպես մյուս գիտությունները, այնպես էլ լեզվաբանությունը վաղուց դուրս է եկել համաշխարհային ասպարեզ, և հայ լեզվաբանության խնդիրը պետք է լինի ետ չմնալ այն մակարդակից, որին հասել է համաշխարհային լեզվաբանական միտքը:

Արդի հայերենի կառուցվածքի ուսումնասիրության մեջ նոր մեթոդների ու եղանակների կիրառումն անկասկած կարող է առաջ մղել հայ լեզվաբանությունը. այն կօգնի ոչ միայն լեզվական նոր երևույթների հայտնաբերման գործին, այլև կդառնա շափանիչ անցյալի եզրահանգումների և ըմբռնումների արժեքը ճիշտ որոշելու, անցյալի հայ լեզվաբանական միտքը ըստ արժանվույն գնահատելու համար:

Ահա նման մղումի մի արտահայտություն պետք է համարել արդի հայերենի հոլովների քանակի շուրջը ծավալված բանավեճը, որը երկար դադարներից զոյություն ունի ավելի քան վաթսուներորդի:

Դեռևս մեր դարի սկզբին անվանի հայագետ Մանուկ Աբեղյանը, ելնելով այն բանից, որ ժամանակակից հայոց գրական լեզվում յուրաքանչյուր գոյական կարող է ունենալ հինգ բառաձև, հանգեց այն եզրակացության, որ սեռական հոլովը ձևով նույնացել է անորոշ տրականին, իսկ հայցական հոլովն էլ՝ սեղդականին, և այսպիսով այս երկու հոլովները ջնջվել են աշխարհաբարում,

լստ որում սեռական հոլովի ֆունկցիան իր վրա է վերցրել տրականը, իսկ հայ-
ցականի ֆունկցիան՝ ուղղականը, մասամբ նաև տրականը:

Արեղյանի այս եզրակացությունն այնքան բացահայտ ու տրամաբանա-
կան էր թվում, որ կարծվում էր, թե ոչ մի առարկություն չպետք է լիներ, և այն
պետք է ընդունվեր իբրև բացահայտ ճշմարտություն: Սակայն, ինչպես հայտնի
է, Արեղյանի այդ տեսակետը չընդունվեց, իսկ ժամանակի մի այլ նշանավոր
հայագետ՝ Ստեփանոս Մալխասյանցը, իր հոդվածներով կտրականապես մեր-
ժում էր Մ. Արեղյանի նորամուծությունը:

Արդի հայերենի հոլովների քանակի շուրջը վեճ եղավ նաև 30-ական թթ. և
Այդ վեճը գնում է և այժմ, սակայն այս անգամ վեճն արծարծողները հանդե-
ս են գալիս նորագույն լեզվաբանության դրոշակով: Մ. Արեղյանի վերոհիշյալ
տեսակետը ընդունելով իբրև միակ ճիշտ ու գիտական տեսակետ և այն համա-
րելով մեր գիտության մեջ անարդարացիորեն մերժված, նրանք հանդես են
գալիս Արեղյանի տեսակետների շարադրանքով և կտրական պահանջ են դնում
հայոց լեզուն թոթափել սեռական և հայցական հոլովներից:

Մ. Արեղյանի երբեմնի սկսած բանավեճի և նրա բանավիճալին դրույթների
վերստին հարություն առնելը խոսում է այն մասին, որ արդի հայերենում սե-
ռական ու հայցական հոլովների գոյություն ունենալու կամ չունենալու հարցը
իւր վերջնական լուծումը չի ստացել, և որ այն լուծելու համար բավական չեն ոչ
մերժողական կամ հաստատական հայտարարություններն ու անապացույց
կանխատեսումները և ոչ էլ գիտական այս կամ այն մեծությունների վկայա-
կոչելը:

Հին հայոց գրական լեզուն գրաբարից դեպի աշխարհաբարն ունեցած իր
բարգաժան ճանապարհին ենթարկվել է զգալի փոփոխության, որն արտա-
հայտվել է նաև նրա հոլովական համակարգում: Իսկապես, եթե գրաբարում
դոյականի սեռական և տրական հոլովները որոշ բառերի համար դեռևս ունեին
առանձին բառաձևեր, հոլովական տարբեր ձևեր, ապա արդի հայերենում այդ
ձևական տարբերությունները վերացել են, և սեռականն ու անորոշ տրականը
ձևով լիովին նույնացել են: Եթե գրաբարում գոյականի հայցական հոլովը հոդ-
նակիում ուներ իր հատուկ ձևավորումը, հոլովական առանձին ձևը, ապա արդի
հայերենում այդ տարբերությունը լիովին վերացել է: Հոլովական ձևերի այս
նույնացման փաստից ելնելով՝ այժմ հայ լեզվաբանների մի մասը պնդում
է Մ. Արեղյանի ավելի բան վաթսույն տարի առաջ հալտնած տեսակետը:

Հակառակ այս տեսակետի, հայ լեզվաբանների մեծ մասն էլ գտնում է, որ
սեռականի և անորոշ տրականի, ինչպես նաև հայցականի և ուղղականի ձևա-
կան նմանությունը դեռևս չի նշանակում սեռականի և հայցականի վերացում,
բանի որ նմանաձևությունը դեռևս ապացույց չէ քերականական տարբեր երե-
վույթների ձուլման կամ ջնջման:

Այս երկու հակասական տեսակետների միջև գոյություն ունի մի երրորդ
տեսակետ ևս: Այս տեսակետի հեղինակը պրոֆ. էդ. Աղայանն է: Հիմք ունե-
նալով այն փաստը, որ անձնական դերանուններն ունեն տրականից իրենց ձևով
միանգամայն տարբեր սեռականի ձևեր, պրոֆ. էդ. Աղայանն այն կարծիքն է
պաշտպանում, որ արդի հայերենը կորցրել է հայցական հոլովը, սակայն պա-
հել է սեռականը:

Այժմ փորձենք պարզել, թե այս հակասական տեսակետներից որն է ավելի
ճիշտ արտացոլում մեր լեզվի արդի փուլի հոլովական համակարգը, իսկապես

մեր լեզվում սեռական և հայցական հոլովներն իսպառ ջնջվել են, թե տեղի է ունեցել ձևերի նույնացում, սակայն հիշյալ հոլովները պահպանել են իրենց գոյությունը:

Քեռականական ամեն մի կարգ բնորոշվում է իր երկու կողմերի ամբողջությամբ արտաքին ձևավորումով (ձև) և արտահայտած քերականական իմաստով (բովանդակություն), ըստ որում ձևի և բովանդակության հարաբերությունը լեզվի զարգացման տվյալ փուլում կարող է արտահայտվել հետևյալ կերպ.

ա. Մեկ ձևը կարող է միայն մեկ քերականական իմաստ արտահայտել:

բ. Մեկ ձևը կարող է երկու կամ ավելի իմաստներ արտահայտել:

գ. Մեկ քերականական իմաստը կարող է արտահայտվել մեկ քերականական ձևով:

դ. Մեկ քերականական իմաստը կարող է արտահայտվել երկու կամ ավել քերականական ձևերով:

Լեզվի զարգացման ընթացքում կոնկրետ որևէ հարաբերություն կարող է փոխվել, որովհետև լեզվի զարգացման օրենք է ինչպես միիմաստությունից դեպի բազմիմաստություն և բազմիմաստությունից դեպի միիմաստություն, այնպես էլ միաձևությունից դեպի բազմաձևություն և բազմաձևությունից դեպի միաձևություն հակասական շարժումը: Հետևաբար անհնար է, որ լեզվում չհամընկնեն ինչպես տարբեր իմաստներ արտահայտող միանման ձևերը, այնպես էլ տարբեր ձևերով արտահայտվող միևնույն քերականական իմաստները:

Որպեսզի կարելի լինի ապացուցել կամ ժխտել մեր լեզվում սեռական ու հայցական հոլովների գոյությունը, պետք է դիմել լեզվական փաստերին, մեր լեզվի երևույթների գործնական քննությունից հանված հետևություններին և ամենևին չբավարարվել սոսկ տեսական ենթադրություններով կամ մեծ ու փոքր հեղինակություններ վկայակոչելով:

Սկսենք սեռական հոլովից:

Գոյականի սեռական հոլովը արդի հայերենում ձևով նման է անորոշ տրականին: Այժմ անհրաժեշտ է պարզել, թե սեռական կոչվածը նույն անորոշ տրականն է, որն իր վրա է վերցրել նաև սեռականի ֆունկցիան, թե սեռականը տրականին հակադիր, նրանից տարբեր մի բան է, սակայն միայն ձևով է նման անորոշ տրականին:

Միանգամայն հնարավոր է, որ մեր լեզվի զարգացման հետևանքով սեռական և տրական հոլովները ձևով նույնանային, և երկու տարբեր ձևերի փոխարեն մնացած մեկը իր վրա առներ նախկին երկու հոլովական իմաստների նշանակությունները և կատարեր անցյալի այդ երկու տարբեր հոլովների շարահյուսական գործառնությունները: Սա միանգամայն հավանական ու հնարավոր բան է, և սովորաբար այս ձևով է մեռնում հոլովը որևէ լեզվում:

Իսկ հնարավոր չէ արդյոք, որ դարերի ընթացքում երկու տարբեր լեզվական երևույթներ ձևով նույնանային, բայց և միաժամանակ պահպանեն իրենց էությունը, այսինքն՝ հնարավոր չէ, որ սեռականը և տրականի անորոշ ձևը ձևով նույնանային, սակայն սրանցից յուրաքանչյուրը մնար ու գիտակցվեո իբրև առանձին հոլով: Այս էլ, կարծում ենք, միանգամայն հնարավոր մի բան է, մանավանդ որ մեր լեզուն տալիս է լեզվական տարբեր երևույթների ձևական նույնացման և ձևական զուգահեռության հարյուրավոր փաստեր: Ահա դրանցից

միայն երկուսը: Հայերեն ՀԱԻՏ բառը հնչյունափոխության ենթարկվելով՝ վերջին դարերում վերածվել է ՀՕՏ>ՀՈՏ ձևին և լիովին նույնացել հին ՀՈՏ բառին, որն ուներ այլ նշանակություն: Այժմ հայերենում կան ՀՈՏ (բույր) և ՀՈՏ (մանր եղջերավոր անասունների խումբ) երկու առանձին բառերը, սակայն միանգամայն նույն հնչումով: Նույն ձևով ՍԵՐ բառը հնչյունափոխվելով՝ վերջին դարերում վերածվել է ՍԵՐ բառին և լիովին նույնացել հին ՍԵՐ բառին, որով և մեր լեզվում այժմ ունենք ՍԵՐ (զգացմունքը) և ՍԵՐ (կաթի երեսը) ձևով միանգամայն նման, սակայն իմաստով տարբեր բառերը: Այսպիսի օրինակները մեր լեզվում շատ-շատ են, սակայն բավարարվենք այս երկու օրինակով, որովհետև այսքանն էլ բավական է մեր միտքը հասկանալի դարձնելու համար: Այժմ ոչ մի լեզվաբան չի կարող ասել, թե հայերենում ունենք միայն մեկ ՀՈՏ բառ երկու տարբեր նշանակություններով, միայն մեկ ՍԵՐ բառ երկու տարբեր նշանակություններով: Հետևությունն այն է, որ լեզվական ձևերը կարող են նույնանալ, սակայն չդադարել առանձին երևույթներ ըմբռնվելուց: Ուստի նույնաձևությունը լեզվում սովորական երևույթ է, և կարող է պատահել, որ սեռական հոլովն էլ ձևով նույնացած լինի անորոշ տրականին, բայց միաժամանակ պահպանած լինի իր ինքնուրույնությունը: Կարող է այս էլ պատահել, բայց սա սոսկ ենթադրություն կլինի և որևէ գիտական արժեք չի ունենա, եթե փաստերով անհնար լիներ այդ ապացուցել:

Հայոց լեզվում խոսքի մասերը իրենց արտահայտած բառային-իմաստաբանական հատկանիշների հիման վրա ձևոք են բերել խոսքի մեջ կիրառվելու առանձնահատկություններ: Այդ առանձնահատկությունների հիման վրա է կառուցվում հայերեն խոսքը, այդ առանձնահատկություններով է առաջ գալիս մեր՝ հայերիս լեզվական աշխարհըմբռնումը, աշխարհի իրերի ու երևույթների մեր լեզվական ճանաչողությունը, հետևաբար և մեր մտածողությունը:

Ժամանակակից հայոց գրական լեզվում գոյական անվան և առարկայական իմաստ ունեցող դերանունների հոլովի քերականական կարգը ևս լեզվական միջոց է, որը ծառայում է մեր աշխարհըմբռնմանը, իրերի ու երևույթների յուրահատուկ հարաբերությունների լեզվական ճանաչմանն ու ըմբռնմանը և այդ հարաբերությունների մեր լեզվական արտահայտմանը:

Արդ, ինչպե՞ս է դրսևորում մեր ժողովուրդը իրերի ու երևույթների հարաբերությունները տարբեր հոլովների միջոցով: Այդ պարզելու համար այժմ քննության առնենք հայերենի հոլովական ձևերը միայն ձևաբանական մեկ հատկանիշի՝ որոշյալի և անորոշի քերականական կարգի տեսակետից, մի պահ անտեսելով հոլովների մյուս բոլոր քերականական հատկանիշները:

Մի պահ ենթադրենք, թե հայերենում սեռական հոլով չի եղել, և այժմ էլ ոչ ոք դրա գոյությունը մեր լեզվում չի ընդունում: Հնարավոր է արդյոք քերականական այս կարգի միջոցով հաստատել սեռական հոլովի գոյությունը: Փորձենք ապացուցել, որ ոչ միայն հնարավոր է, այլև անխուսափելի:

Ուրեմն սկսենք սկզբից:

Որպեսզի իմանանք, թե արդի հայերենում քանի հոլով կա, պետք է հավարենք և դասավորենք գոյականի և գոյականաբար առնված հոլովվող այլ բառերի բոլոր բառաձևերը, որովհետև հոլովների տարբերակման առաջին պայմանը բառի տարբեր ձևերն են: Արդի հայերենի գոյականը և գոյականաբար առնված այլ բառեր այդ տեսակետից ներկայացնում են հետևյալ պատկերը (տե՛ս աղյուսակը):

Թեև այս աղյուսակը լիակատար կերպով չի արտացոլում գոյականի փոփոխությունների բոլոր հնարավոր դեպքերը, սակայն այսքանից էլ կարելի է որոշ հետևություններ անել:

Եւր առաջին հետևությունն այն է, որ տարբեր գոյականներ տարբեր քանակի բառաձևեր են հանդես բերում: Բառաձևերի քանակը, ինչպես երևում է աղյուսակից, տատանվում է երկուսի և վեցի միջև: Գրիգորեն բառն ունի երկու ձև, զարուն բառը՝ երեք, կին բառը՝ չորս, դաշտ բառը՝ հինգ, իսկ միություն բառը՝ վեց բառաձև: Երկրորդ հետևությունն այն է, որ կան բառեր, որոնք հոգնակի չունեն (կառուցել), և կան բառեր էլ, որոնք եզակի թիվ չունեն (Գրիգորեն): Երրորդ հետևությունն այն է, որ շատ բառերի եզակին և հոգնակին տարբեր ձևեր են հանդես բերում, սակայն այս աղյուսակում մի ձևի տակ են դրված: Այսպես, օրինակ, օրվա և օրերի, կնոջ և կանանց, տան և աների, այգու և այգիների և այլն թեև տարբեր բառաձևեր են, սակայն աղյուսակում դրված են մի շարքի վրա: Ուստի, եթե այս տարբերություններն էլ հաշվի առնենք, ապա բառերի ձևերը կշատանան: Զորրորդ հետևությունն այն է, որ առաջին ձևի տակ դրված հորիզոնական շարքի բառերը ոչնչով միմյանց նման չեն, միմյանց ոչնչով նման չեն նաև երկրորդ ձևի տակ հորիզոնական շարքով դասավորված բառաձևերը, սակայն, այնուամենայնիվ վերանայով այսքան տարբերություններից՝ քերականները դրանք առանձին ձևեր են համարում: Հինգերորդ հետևությունը բխում է չորրորդից. միմիայն բառի փոփոխված ձևը բավական չէ հոլովի քանակը որոշելու համար: Հոլովը որոշելիս հաշվի է առնվում ոչ միայն բառաձևերի քանակը, այլև բառաձևերի արտահայտած քերականական իմաստները: Քերականական իմաստների հաշվառմամբ է, որ, օրինակ, միությունով և միությամբ տարբեր բառաձևերը մեկ հոլովական ձև են համարվում, դաշտի, օրվա, կնոջ, զարնան, այգու, միության և այլ տարբեր ձևեր մեկ հոլովական ձև են համարվում և այլն: Մեր հաջորդ հետևությունն այն է, որ ամենևին էլ անիմաստ բան չէ այն փաստի գիտակցումը, որ արդի հայերենի գոյականը կարող է ունենալ բաղմադան ձևեր:

Վերահիշյալ բոլոր պայմանականությունները հաշվի առնելուց հետո պարզվում է, որ ամենաշատ ձևեր ունեցող բառերում առաջին ձևը հակադրվում է մյուս չորս ձևերին նրանով, որ վերջավորություն չունի, երրորդ, չորրորդ և հինգերորդ ձևերն ունեն համարյա բոլոր բառերի համար միանման ընդհանուր համապատասխան վերջավորություններ, իսկ երկրորդ հորիզոնականի վրա տեղավորված ձևերն էլ մի խումբ են կազմում, որովհետև իրենց ձևով հակադրվում են թե՛ առաջինին և թե՛ երրորդ, չորրորդ և հինգերորդ ձևերին:

Երրորդ, չորրորդ և հինգերորդ ձևերը մեր քերականության մեջ համապատասխանաբար կոչվում են բացառական, գործիական և ներգոյական հոլովներ: Այս հոլովները, ինչպես տեսնում ենք, որոշյալի և անորոշի դուգահեռ ձևեր չունեն, այնինչ առաջին երկու ձևերը կամ որոշյալ ձևով են հանդես գալիս, կամ՝ անորոշ:

Այժմ մեզ հետաքրքրողն այս քերականական կարգն է: Արդյոք առաջին և երկրորդ ձևերը մեկական հոլով են, թե ոչ:

Մինչև այժմ հայ լեզվաբաններին հետաքրքրել է միայն մի բան՝ հոլովը կամ բառաձևը ստանում է որոշյալ հոգ, թե ոչ: Նրանց ամենևին չի հետաքրքրել այն հարցը, թե բառի անհոգ ձևը կարո՞ղ է որոշյալ լինել, թե ոչ, այնինչ մոտ շատ կարևոր մի բան է:

[illegible]

Հարցի այսպիսի ձևական քննության հետևանքով մինչև այժմ չի բացահայտված քերականական այս կարևոր կարգի էությունը: Բանն այն է, որ որոշիչ հոգ շատնալը դեռևս ոչինչ չի ասում բառի բուն էության մասին, նրա անորոշ կամ որոշյալ լինելու մասին:

Նախ ասենք, որ որոշյալի ու անորոշի քերականական կարգն այլ բան է, և որոշյալի ու անորոշի հասկացական կարգն այլ բան: Մեզ ծանոթ բոլոր լեզուներն էլ ունեն որոշյալի ու անորոշի հասկացական կարգ, բայց ամեն լեզու չէ, որ ունի գոյականի որոշյալի ու անորոշի քերականական կարգ: Ժամանակակից ռուսերենում գոյականն, օրինակ, չունի որոշյալ ու անորոշ ձևեր, այսինքն ռուսերենում չկա որոշյալի և անորոշի քերականական կարգը, սակայն ամեն մի ռուս խոսքի մեջ որոշյալ առարկան տարբերում է անորոշ առարկայից: Որոշյալի և անորոշի զաղափարը կարելի է արտահայտել լեզվական տարբեր միջոցներով, և ռուսերենն այդ արտահայտում է իր լեզվական միջոցներով, սակայն առանց գոյականի քերականական այդ կարգին դիմելու:

Ժամանակակից հայոց գրական լեզուն մշակել է գոյականի որոշյալի և անորոշի քերականական կարգ՝ հետևյալ առանձնահատկություններով:

1. Որոշ բառաձևեր կամ հոլովներ տարբերակել են որոշյալ ձևն անորոշից, այսինքն՝ բառն առանց հոլովական հարաբերությունն ու հոլովական իմաստը փոխելու կարող է կամ որոշյալ հոգով գործածվել, կամ կարող է առանց որոշյալ հոգի գործածվել: Այսպիսի հոլովաձևեր են մեր աղյուսակի առաջին երկու հորիզոնական շարքերը (եթե հաշվի չառնենք մաբդ, կիև բառերի հոգնակին և Գրիգորենց տիպի բառերը): Այս շարքերում բառի անորոշ ձևը հակադրվում է որոշյալ ձևին:

2. Մյուս հոլովներում՝ բացառական, գործիական և ներգոյական, գոյականը գրական լեզվում հոգ չի ստանում:

Հետևաբար՝ սոսկ հոգ ստանալու կամ շատնալու տեսակետից հայերենի հոլովները բաժանվում են երկու խմբի՝ ա) հոլովներ, որոնք հոգ կարող են ստանալ կամ շատնալ, և բ) հոլովներ, որոնք հոգ ստանալ չեն կարող:

Մեր քերականության մեջ այսքանը վաղուց է ասված, սակայն սա դեռևս պատկերացում չի տալիս բառերի որոշյալ կամ անորոշ լինելու մասին, այսինքն՝ որոշյալի և անորոշի քերականական կարգի մասին: Բանն այն է, որ հոգով գործածված բառաձևերը պարտադիր որոշյալ են լինում, այնինչ անհոգ ձևերը միշտ չէ, որ անորոշ են լինում:

Այժմ չբավականանալով սոսկ հոգ ստանալու կամ շատնալու փաստի արձանագրումով, փորձենք պարզել, թե ինչ պատկեր ունի անորոշի և որոշյալի քերականական կարգը արդի հայերենում:

Նախ սկսենք այն հոլովներից, որոնք հոգ չեն ստանում:

1. Բացառական հոլով

Հնուցա ծառից կապակցության մեջ ծառից բացառական ձևը կարող է ազատորեն լրացվել թե՛ որոշյալ իմաստ արտահայտող բառերով և թե՛ անորոշ իմաստ արտահայտող բառերով: Հնուցա ԱՅՍ, ԱՅԴ, ՈՐ ծառից կապակցության մեջ ԱՅՍ, ԱՅԴ և ՈՐ բառերը որոշյալ նշանակություն ունեն, որոշյալ ցուցիչներ են, հետևաբար կարող են այնպիսի բառերի որոշիչ լրացում դառնալ, որոնք ունեն որոշյալ նշանակություն: Ուստի այս կապակցության մեջ ծառից բառն ունի որոշյալ նշանակություն: Հնուցա ՈՂՁ, ԱՄԲՈՂՁ, ԲՈՂՈՐ ծառերից կապակցության մեջ ծառերից բառն ունի նույնպես որոշյալ իմաստ, որովհետև

այն լրացված է այնպիսի որոշիչ լրացումներով, որոնք ունեն որոշյալ նշանակություն և կարող են դրվել միայն որոշյալ իմաստ արտահայտող բառերի վրա:

Սակայն միանգամայն նույն կապակցության մեջ ծառից բառը կարող է լրացվել նաև այնպիսի բառերով, որոնք ունեն անորոշ նշանակություն և այդ պատճառով էլ կարող են դառնալ միայն ու միայն անորոշ նշանակություն արտահայտող բառերի որոշիչ լրացում: Օրինակ՝ հեռացա ինձ-ՈՐ, ՈՐեՎ է, ՄԻ ծառից կապակցության մեջ ծառից բառն ունի անորոշ իմաստ, որովհետև ինձ-ՈՐ, ՈՐեՎ է, ՄԻ բառերն ունեն անորոշ նշանակություն և կարող են դառնալ միայն անորոշ իմաստով գործածված բառերի որոշիչներ: Հեռացա ԱՅՆ, ՈՒՐԻՇ, ՄԻ ՔԱՆԻ ծառերից կապակցության մեջ ևս ծառերից բառն ունի անորոշ իմաստ, որովհետև ԱՅՆ, ՈՒՐԻՇ, ՄԻ ՔԱՆԻ բառերը ևս անորոշ ցուցիչներ են, այսինքն՝ արտահայտում են անորոշ իմաստ և կարող են դառնալ միայն անորոշ իմաստով գործածված գոյականի որոշիչ լրացում:

Այս կանոնը առանց որևէ բացառության վերաբերում է բացառական հոլովով գործածված ամեն մի գոյականի:

Այսբանից հանված եզրակացությունն է՝ բացառական հոլովը թեև հոգ չի ստանում, սակայն իր մեկ ձևի տակ կարող է լինել և՛ անորոշ, և՛ որոշյալ, կարող է արտահայտել թե՛ որոշյալի քերականական կարգը և թե՛ անորոշի քերականական կարգը:

2. Գործիական հոլով

Կտրեցի դանակով կապակցության մեջ դանակով գործիական հոլովով դրված բառը կարող է առնել որոշյալի ցուցիչներ: Կտրեցի ԱՅՍ, ԱՅԴ, ԱՅՆ, ՈՐ դանակով կապակցության մեջ դանակով բառն ունի որոշյալ նշանակություն, որովհետև ԱՅՍ, ԱՅԴ, ԱՅՆ, ՈՐ բառերն ունեն որոշյալ նշանակություն և կարող են դառնալ միայն որոշյալ իմաստով գործածված բառերի որոշիչ լրացում: Նույն բանը վերաբերում է նաև հոգնակի թվին. կտրեցի ԱՅՍ, ԱՅԴ, ԱՅՆ, ՈՐ ԲՈՂՈՐ, ՈՂՁ, ԱՄԲՈՂՁ դանակներով կապակցության մեջ դանակներով գոյականն ունի որոշյալ նշանակություն:

Սակայն նույն կապակցության մեջ դանակով գոյականը կարող է առնել նաև անորոշի ցուցիչներ՝ կտրեցի ինձ-ՈՐ, ՈՐեՎ է, ՄԻ, ԱՅՆ, ՈՒՐԻՇ դանակով կապակցության մեջ դանակով գոյականն ունի անորոշ իմաստ. այդ ենթադրուցում նրա վրա դրված անորոշ նշանակություն ունեցող ինձ-ՈՐ, ՈՐեՎ է, ՄԻ, ԱՅՆ, ՈՒՐԻՇ բառերը, որոնք կարող են միայն անորոշ իմաստով գործածված բառերի լրացում դառնալ:

Այս կանոնը առանց որևէ բացառության վերաբերում է գործիական հոլովով գործածված ամեն մի գոյականի:

Այստեղից բխում է այն եզրակացությունը, որ իր մեկ ձևով գործիական հոլովը կարող է գործածվել թե՛ անորոշ իմաստով և թե՛ որոշյալ իմաստով, ուստի և մեկ ձևով կարող է արտահայտել թե՛ անորոշի և թե՛ որոշյալի քերականական կարգերը:

3. Ներգոյական հոլով

Աշխատում եմ գործարանում կապակցության մեջ գործարանում գոյականը կարող է առնել թե՛ որոշյալի ցուցիչներ և թե՛ անորոշի ցուցիչներ: Աշխատում եմ ԱՅՍ, ԱՅԴ, ԱՅՆ, ՈՐ գործարանում կապակցության մեջ գործարանում բառն ունի որոշյալ իմաստ, իսկ աշխատում է ինձ-ՈՐ, ՈՐեՎ է, ՄԻ գործարանում կապակցության մեջ գործարանում բառն ունի անորոշ իմաստ:

Այս կանոնն առանց բացառության վերաբերում է ներգոյական հոլովով գործածված ամեն մի գոյականի:

Այստեղից էլ բխում է նույն եղրակացությունը՝ իր մեկ ձևով ներգոյական հոլովը կարող է գործածվել թե՛ անորոշ իմաստով և թե՛ որոշյալ իմաստով, հետևաբար և մեկ ձևով կարող է արտահայտել թե՛ անորոշի և թե՛ որոշյալի քերականական կարգերը:

Ընդհանուր եղրակացությունն այն է, որ արգի հայերենի բացառական, գործիական և ներգոյական հոլովները թեև որոշյալ հոդ չեն ունենում, սակայն իրենց մեկ ձևով՝ առանց հոդի, նախադասության մեջ արտահայտում են թե՛ որոշյալի և թե՛ անորոշի քերականական իմաստներ, խոսքում հանդես գալով կա՛մ որոշյալ նշանակությամբ, կա՛մ անորոշ:

Այժմ տեսնենք, թե ինչ առանձնահատկություններ են հանդես բերում մյուս հոլովները:

1. Բառի ուղիղ ձևը

Մառ կտրվեց կապակցության մեջ ծառը գոյականը կարող է առնել միայն որոշյալի ցուցիչներ (ԱՅՍ, ԱՅ՛հ, ԱՅ՛ն, ՈՐ ծառը կտրվեց): Այն չի կարող առնել անորոշի ցուցիչներ, որովհետև ծառը բառն ունի որոշյալ իմաստ: Մառ կտրվե՞ց կապակցության մեջ ծառ բառը կարող է առնել միայն անորոշի ցուցիչներ (ԻնՉ-ՈՐ, ՄԻ, ՈՐԵՎ է ծառ կտրվեց), որովհետև ծառ բառն ունի անորոշ իմաստ: Սա ԱՅՍ, ԱՅԴ, ԱՅ՛ն, ՈՐ ծառն է կապակցության մեջ ծառն բառն առնում է միայն որոշյալի ցուցիչներ, որովհետև ինքն ունի որոշյալ իմաստ: Կտրվածը ԻնՉ-ՈՐ, ՄԻ, ՈՐԵՎ է ծառ է կապակցության մեջ ծառ բառը կարող է ունենալ միայն անորոշի ցուցիչներ, որովհետև ինքն ունի անորոշ իմաստ: Կտրեցի ԱՅՍ, ԱՅԴ, ԱՅ՛ն, ՈՐ ծառը կապակցության մեջ ծառը բառն ունի և կարող է ունենալ միայն որոշյալի ցուցիչներ, որովհետև այդ բառն ունի որոշյալ իմաստ: Կրտրեցի ԻնՉ-ՈՐ, ՄԻ, ՈՐԵՎ է ծառ կապակցության մեջ ծառ բառն ունի և կարող է ունենալ միայն անորոշ իմաստ արտահայտող լրացումներ, որովհետև ծառ բառն ունի անորոշ իմաստ:

Հետևաբար՝ բառի ուղիղ ձևը արգի հայերենում կարող է հանդես գալ երկու ձևով՝ անորոշ կամ որոշյալ, բայց որում անորոշ ձևը կարող է լրացվել միայն անորոշ իմաստ ունեցող լրացումներով, իսկ որոշյալ ձևը կարող է լրացվել միայն որոշյալ իմաստ ունեցող լրացումներով, որովհետև անորոշ ձևը միայն անորոշ է և արտահայտում է անորոշի քերականական կարգ, իսկ որոշյալ ձևը միայն որոշյալ է և արտահայտում է որոշյալի քերականական կարգ¹:

Մի շարք բայերի հետ (զնալ, գալ, մեկնել, հասնել) և այլն, որոնք արտահայտում են ուղեորման, մի տեղից մի այլ տեղ գնալու, տեղափոխվելու, որևէ տեղ հասնելու գս.ղափար, ուղիղ ձևով գոյական լրացումը կարող է հանդես գալ առանց որոշյալ հոդի, սակայն իմաստով լինել որոշյալ: Այդ լինում է երկու դեպքում.

ա) Աշխարհագրական վայրի անուն հանդիսացող հատուկ անուններն ունենում են որոշյալ նշանակություն, սակայն գործածվում են առանց որոշյալ հո-

¹ Տուև, տեղ, չափ, օր, ամս, լամ բառերի հետ անցյալում կարող էր լինել և՛ որոշյալ, և՛ անորոշ իմաստով լրացում: Այժմ էլ տուև բառը կարող է գործածվել որոշյալ ցուցիչ հետ առանց որոշյալ հոդի, իսկ մյուսները որոշյալ ցուցիչով առանց որոշյալ հոդի հանդիպում են բարդություններում (այսօր, այստեղ, այսֆան, այսպես, այնչափ և այլն): Այս դարիս է մեր հին լեզվից և այժմ գոյություն ունի իբրև վերապրուկ:

դի: Օրինակ՝ գնաց Հնդկաստան, ուղևորվում է Վան, գալիս է Մոսկվա, հասնւմ Հայաստան և այլն:

բ) Տեղի գաղափար արտահայտող մի շարք հասարակ գոյականներ նույն բայերի հետ գործածվում են առանց հոգի, սակայն ունենում են որոշյալ իմաստ: Այդպիսի գոյականներ են՝ տուն, բաղա՛, գյուղ, գյուղամեջ, գրասեն- յակ, գործարան, հիմնարկ, հրապարակ, շուկա, համալսարան, ինստիտուտ, յւլբոց, դարբնոց, արհեստանոց, ջրաղաց, այգի և այլն: Ինչպես դժվար չէ նկա- տել, սրանք այնպիսի գոյականներ են, որոնք տվյալ միջավայրի համար հան- դես են գալիս իբրև եղակի, բոլորին հայտնի, ուստի և որոշյալ նշանակություն ունեցող գոյականներ:

Հիշյալ այս երկու դեպքերում գոյականն ունենում է որոշյալ իմաստ, եթե գործածված է առանց որևէ որոշիչ ցուցչի: Նույն գոյականները, եթե որոշյալ ցուցիչ լրացում են ունենում, հանդես են գալիս միայն որոշյալ ձևով, իսկ եթե անորոշ նշանակությամբ լրացում են ունենում, հանդես են գալիս միայն անո- րոշ ձևով:

Երկու դեպքում միայն գոյականն իր ուղիղ ձևով չի կարող առնել ո՛չ որոշ- յալ և ո՛չ էլ անորոշ ցուցիչներ՝ երբ գործածվում է իբրև կոչական, և երբ գոր- ծածվում է իբրև որոշիչ:

Քեզ եմ դիմում, իմ սիրելի րեկեր կապակցության մեջ րեկեր գոյականն ունի (և կոչականը միշտ ունենում է) որոշյալ իմաստ, սակայն որոշյալ ցուցիչ լրացում չի առնում: Այս երևույթի պատճառն այն է, որ կոչական իբրև գոյա- կան առնված է երկրորդ դեմքով: Եթե այն հոգ ստանա, կվերածվի երրորդ դեմ- քի. այս դեպքում կոչականը կդադարեր կոչական լինելուց: Գոյականը, բացի այն դեպքից, երբ գործածվում է իբրև կոչական, սովորաբար գործածվում է երրորդ դեմքով, սակավաթիվ գործածություններում միայն ստանալով Ս կամ Դ հոդ՝ ձևոք է բերում առաջին կամ երկրորդ դեմքի նշանակություն: Կոչական դառնալիս գոյականը ունենում է, ինչպես ասվեց, երկրորդ դեմքի նշանակու- թյուն և որոշյալ Ը կամ Ն հոդ չի ստանում. այդ այն պատճառով, որ Ը և Ն որոշ- յալ հոդերը միաժամանակ երրորդ դեմքի հոդեր են: Եթե այս հոդերը զրվեն կո- չականի վրա, նրան կզրկեն երկրորդ դեմքի գաղափարից, հետևաբար և կոչա- կանն էլ կդադարի կոչական լինելուց: Այս պատճառով էլ կոչականը միշտ անորոշ ձևով է գործածվում, թեև միշտ ունենում է որոշյալ նշանակություն:

Գոյականն իբրև որոշիչ գործածվելիս նույնպես հոդ չի ստանում, սակայն այս դեպքում երբեք որոշյալ նշանակություն չի ունենում: Իբրև որոշիչ գործած- վելիս գոյականն ամենաընդհանուր, ամենաանորոշ իմաստով է նշանակում առարկա, ավելի ճիշտ՝ այն գործածվում է ոչ առարկայական նշանակությամբ, այլ իբրև հատկանիշ, այդ պատճառով էլ գոյական որոշիչը ո՛չ որոշյալ նշա- նակություն է ունենում, ո՛չ սրևէ լրացում է ունենում և ո՛չ էլ հոդ է առնում:

Վերոհիշյալ երևույթներն առաջ են եկել մեր լեզվի զարգացման երկարա- տև պատմության ընթացքում, և դա անտեսել մենք չենք կարող:

Ամփոփելով մեր ասածները, դարձյալ հանգում ենք այն եզրակացության, որ կոչականի ուղիղ ձևը միևնույն կապակցության մեջ, միևնույն խոսքային միջավայրում չի կարող ունենալ և՛ որոշյալի իմաստ, և՛ անորոշի. այն կա՛մ որոշյալի իմաստով է գործածվում և ստանում է որոշյալ հոդ (ծառք կտրվեց, ծառք կտրեցի), կա՛մ անորոշ իմաստով է գործածվում և որոշյալ հոդ չի ստա- նում (ծառ կտրվեց, ծառ կտրեցի), կա՛մ որոշյալ է և ընդհանրապես հոդ ստա-

նալ չի կարող (Քեզ եմ դիմում, ով քաջ Արտաշես, կանայք մեր երկրում տղամարդկանց հավասար իրավունք ունեն, Մարուն՝ ձեզ բարեկամ եմ), կա մ'անորոշ է և որոշյալ հոգ ընդհանրապես չի կարող ստանալ (Լաւ լոռեթյուն, բնկեր Միքայելյան), կա'մ որոշյալ իմաստ ունի, բայց գործածվում է առանց հոգի (հասանք Երևան, մտանք մեր տուն), որը սակայն որոշյալ ցուցիչ ունենալիս հանդես է գալիս միայն որոշյալ հոգով, իսկ անորոշ ցուցիչ ունենալիս արտահայտում է անորոշ իմաստ և հոգ չի ստանում:

Նորից ենք կրկնում՝ գոյականի ուղիղ ձևը միևնույն հարաբերության մեջ, միևնույն կապակցության մեջ չի կարող և' որոշյալ իմաստ ունենալ, և' անորոշ, չի կարող և' որոշյալ ցուցիչներ ունենալ, և' անորոշ:

2. Մնում է քննելու այն հոլովաձևերը, որոնք դասական քերականության կողմից անվանվում են սեռական և տրական, բայց քանի որ մենք սույն հոգվածի սկզբում խոստացել ենք սեռական հոլովի գոյությունն ապացուցել առանց այս երկու հոլովների բաժանման, ուստի նախօրոք ենթադրում ենք, որ սեռական չկա, այլ կա միայն տրական հոլով:

Մոտեցա ծառի կապակցության մեջ ծառի գոյականը կարող է առնել միայն անորոշ իմաստ արտահայտող լրացումներ՝ մոտեցա ԻնՁ-ՈՐ, ՄԻ, ՈՐԵՎԷ, ՈՒՐԻՇ, ԱՅԼ ծառի: Նույն բանն ենք տեսնում նաև հոգնակի թվում: Օրինակ՝ մոտեցա ՈՒՐԻՇ, ԱՅԼ, ԻնՁ-ՈՐ, ՄԻ ՔԱՆԻ ծառերի: Մառի և ծառերի բառաձևերն առնում են միայն անորոշ իմաստ ունեցող լրացումներ, որովհետև իրենք ունեն միայն անորոշ իմաստ:

Մոտեցա ծառին կապակցության մեջ ծառին բառաձևը կարող է ունենալ որոշյալ իմաստ արտահայտող լրացումներ՝ մոտեցա ԱՅՍ, ԱՅԴ, ԱՅՆ, ՈՐ ծառին, որովհետև ծառին բառաձևը որոշյալ իմաստ ունի: Նույն բանն ենք տեսնում նաև հոգնակի թվում՝ մոտեցա ԱՅՍ, ԱՅԴ, ԱՅՆ, ԲՈՂՈՐ, ԱՄԲՈՂՋ, ՈՂՋ ծառերին: Թե' ծառին և թե' ծառերին առնում են միայն որոշյալ իմաստ ունեցող լրացումներ, որովհետև այս բառաձևերը ունեն որոշյալ իմաստ:

Գիրքը դրի սեղանին կապակցության մեջ սեղանին բառաձևը կարող է վերցնել միայն որոշյալ իմաստ ունեցող լրացումներ՝ գիրքը դրի ԱՅՍ, ԱՅԴ, ԱՅՆ, ՈՐ սեղանին: Նույն բանն ենք տեսնում նաև հոգնակի թվում՝ գրքերը դրի ԱՅՍ, ԱՅԴ, ԱՅՆ, ԲՈՂՈՐ, ՈՂՋ սեղաններին: Այս բառաձևերը լրացվում են միայն որոշյալ իմաստ ունեցող բառերով այն պատճառով, որովհետև ունեն որոշյալ իմաստ:

Այս կանոնն ընդհանուր բնույթ ունի բոլոր այն դեպքերի համար, եթե սեղանի կամ սեղանին, ծառի կամ ծառին հանդես են գալիս բայի հետ՝ իբրև նրա լրացում, այսինքն՝ գոյականի վերոհիշյալ բառաձևերը բայի հետ գործածվելիս անկախ իրենց ունեցած շարահյուսական պաշտոնից (պարագա են, թե խնդիր) հանդես են բերում երկու ձև՝ որոշյալ և անորոշ, ըստ որում անորոշ ձևը միշտ ունենում է անորոշ իմաստ, իսկ որոշյալ ձևը՝ որոշյալ իմաստ. անորոշ ձևը ունենում է միայն անորոշ իմաստ ունեցող լրացումներ, իսկ որոշյալ ձևը՝ որոշյալ իմաստ ունեցող լրացումներ:

Մառի նյուղ կապակցության մեջ ծառի բառաձևը, ի հակադրություն նախորդ գործածությունների, կարող է ունենալ և' անորոշ իմաստ արտահայտող լրացումներ, և' որոշյալ իմաստ ունեցող լրացումներ: ԻնՁ-ՈՐ, ՈՐԵՎԷ, ՄԻ, ՈՒՐԻՇ, ԱՅԼ բառերը, որ արտահայտում են անորոշ իմաստ, կարող են զրվել ծառի բառի վրա՝ ԻնՁ-ՈՐ, ՈՐԵՎԷ, ՈՒՐԻՇ, ԱՅԼ ծառի նյուղ, որովհետև ծառի

բառն այս կապակցության մեջ ունի անորոշ իմաստ: Նույն կապակցության մեջ ծառի բառաձևը կարող է վերցնել նաև ԱՅՍ, ԱՅԴ, ԱՅՆ, ՈՐ բառերով արտահայտված լրացումներ, որոնք ունեն որոշյալ իմաստ: Օրինակ՝ ԱՅՍ, ԱՅԴ, ԱՅՆ, ՈՐ ծառի նյութը կապակցության մեջ ծառի բառաձևը որոշյալ իմաստը ունի, այլապես չէր կարող վերցնել որոշյալ իմաստ ունեցող լրացումներ:

Նույն բանն էնք տեսնում նաև հոգնակի թվում: ԻնՁ-ՈՐ, ՈՒՐԻՇ, ԱՅԼ, ՄԻ ՔԱՆԻ ծառերի նյութեր կապակցության մեջ ծառերի բառաձևը ունի միայն անորոշ նշանակություն, այդ պատճառով էլ վերցնում էլ անորոշ իմաստ ունեցող լրացումներ: ԱՅՍ, ԱՅԴ, ԱՅՆ, ԲՈՂՈՐ, ՈՂՋ, ԱՄԲՈՂՋ ծառերի նյութերը կապակցության մեջ ծառերի բառաձևն ունի որոշյալ իմաստ, այդ պատճառով էլ վերցնում է որոշյալ իմաստ ունեցող լրացումներ:

Այս բանը մենք տեսնում ենք բոլոր այն դեպքերում, երբ գոյականի քերականործածված է լինում իբրև մի այլ գոյականի լրացում:

Հետևաբար, ծառի (ծառերի) բառաձևը տարբեր կապակցություններում տարբեր բնավորություններ է հանդես բերում: Գոյականի այս ձևը երբ կապվում է բայի հետ՝ դառնալով նրա լրացում, ունենում է միայն անորոշ իմաստ, և սրան հակադրվում է որոշյալ ձևը, որն ունենում է միայն որոշյալ իմաստ, իսկ երբ այս «անորոշի» ձևը կապվում է գոյականի հետ՝ դառնալով նրա հատկացուցիչ լրացում, ապա ունենում է և՛ անորոշի իմաստ, և՛ որոշյալի:

Մեկ հոլովական ձևը չի կարող մի դեպքում միայն անորոշ լինել, իսկ մի այլ դեպքում լինել և՛ անորոշ, և՛ որոշյալ: Տրամաբանությունը երբեք այդպիսի անհնարություն չի թույլ տալիս: Այսպիսի անհնարություն չի թույլ տալիս նաև մեր լեզուն, որը թեև հոլովաձևերը մասնակիորեն նույնացրել է ձևով, սակայն պահել է նրանց ներքին էական տարբերությունները:

Այս «անորոշ տրական» կոչված ձևի մեջ ուրեմն ունենք երկու միմյանցից ասարբեր, միայն արտաքուստ նման հոլովներ՝ ՏՐԱԿԱՆ, որն ունի անորոշի և որոշյալի իրարից տարբեր ձևեր՝ անորոշի և որոշյալի քերականական կարգերով, և տրականի անորոշի ձևն ունեցող մի այլ հոլով, որն իր միակ ձևով և՛ անորոշ իմաստ ունի, և՛ որոշյալ, և դա է ՍԵՌԱԿԱՆ շՈՂՈՎԸ:

Հոլովների ձևաբանական այս առանձնահատկության բացահայտմամբ մենք ապացուցված ենք համարում սեռական հոլովի՝ իբրև ինքնուրույն, տրականից անկախ մի հոլովի գոյությունը հայոց լեզվում:

Վերը բերված օրինակներում ծառի նյութը կապակցության մեջ ծառի բառաձևը և մոտեցա ծառի կապակցության մեջ եղած ծառի բառաձևը նույն բանը չեն: Մոտեցա ծառի կապակցության մեջ ծառի բառաձևը գոյականի անորոշ հոլովաձև է, տրական հոլովի անորոշ ձևը, այնինչ ծառի նյութը կապակցության մեջ ծառի բառաձևը ամենևին էլ անորոշ բառաձև, անորոշ հոլովաձև չէ: Վերջինս իր այս հատկանիշով միանգամայն նման է բացառականին, գործիականին և ներգոյականին և ոչնչով չի տարբերվում նրանցից: Հետևաբար այն տրական լինել չի կարող, և այնպես, ինչպես բացառականը, գործիականը և ներգոյականն են հակադրվում տրականին, այնպես էլ ծառի (ծառի նյութը կապակցության մեջ) բառաձևն է հակադրվում տրականին, թե՛ որոշյալ և թե՛ անորոշ տրականին:

Մեր այս բացատրություններից հետևում է, որ արդի հայոց գրական լեզուն ձեռք է բերել գոյականի որոշյալությունն ու անորոշությունը դրսևորելու և արտահայտելու յուրահատուկ ձևեր իրենց յուրահատուկ իմաստներով:

Հաշվի առնելով այդ ձևերը և իմաստները, որոշյալության և անորոշության տեսակետից ժամանակակից հայոց գրական լեզվի գոյականի հոլովները բաժանում ենք երկու խմբի՝ անհոդառու և հոդառու:

ա. Սեռական, բացառական, գործիական և ներգոյական հոլովներն իրենց շարահյուսական բոլոր կիրառություններում հանդես են գալիս մեկ հոլովական ձևով և այդ մեկ ձևով դրսևորում են թե՛ որոշյալի և թե՛ անորոշի քերականական կարգերը:

բ. Դոյականի ուղիղ ձևը և տրական հոլովը իրենց շարահյուսական բոլոր կիրառություններում հանդես են գալիս երկու ձևով՝ կամ միայն անորոշ և արտահայտում են միայն անորոշի քերականական կարգ, կամ միայն որոշյալ և արտահայտում են միայն որոշյալի քերականական կարգ:

Այսքանից բխում է մեկ եզրակացություն՝ ժամանակակից հայոց գրական լեզուն ունի գոյականի սեռական հոլով, որը սոսկ ձևով է նման տրական հոլովի անորոշ ձևին:

Սեռական հոլովի և անորոշ տրականի ձևական նույնությունն ամենեին էլ ապացույց չէ այն բանի, որ իբր թե արդի հայերենը չունի սեռական հոլով: Սեռականի և տրականի ձևական այս նմանությունն առաջ է եկել դեռևս հին հայերենում, բայց երբեք սեռականը մեր լեզվի պատմության որևէ ժամանակամիջոցում չի դադարել գոյություն ունենալուց:

Մեր հոլովների վերոհիշյալ այդ առանձնահատկությունը չիմանալով ոմանք այն միտքն են արտահայտել, որ իբր թե արդի հայերենը սեռական հոլով չունի, հետևաբար այն իբրև քերականական երևույթ էլ տեղ չպետք է ունենա դպրոցական ուսուցման մեջ:

Երբ փորձում ես խորամուխ լինել բանի էության մեջ, մնում ես ապշած այն կտրական առաջարկների հանդեպ, որոնք արվում են ոչ միայն լեզու և լեզվի ոգի չիմացող մարդկանց, այլև նույնիսկ լեզվաբան մասնագետների կողմից:

Օտսոր մարդկանց հայոց լեզու սովորեցնելիս բացատրում ենք արդի հայերենի մի կարևոր առանձնահատկություն, որի գիտենալը խիստ պարտադիր է հայիրեն նախադասություն ու մանավանդ խոսք կազմելու համար: Այդ առանձնահատկությունը հետևյալն է. եթե խոսքի մեջ որևէ առարկայի մասին մեկ անգամ որևէ բան է ասվել, ապա անհնար է այդ առարկայի մասին անորոշ ձևով արտահայտվել: Հետևաբար արդեն հայտնի առարկայի կամ անձնավորության մասին արտահայտվում ենք միայն ու միայն որոշյալ իմաստով: Վերցնենք իբրև օրինակ հետևյալ նախադասությունը՝ Եկավ մի աշակերտ: Քանի որ արդեն խոսք եղավ կոնկրետ որևէ աշակերտի մասին, այլևս անհնար է այդ աշակերտը նկատի ունենալով՝ աշակերտ բառը գործածել անորոշ իմաստով, ուստի և անորոշ ձևով: Այդ պատճառով էլ կասենք՝ աշակերտը հոգնել էր, մոտեցա աշակերտին, տեսա աշակերտին և այլն: Ընդհակառակն, անհնար կլինի ասել՝ աշակերտ էր հոգնել, ճանաչում եմ աշակերտի, տեսա աշակերտի և այլն, իթե նկատի ունենք նույն աշակերտը: Այնինչ նույն աշակերտը նկատի ունենալով՝ կարող ենք ասել՝ այդ աշակերտի հայրը բանվոր է, այդ աշակերտից նամակ եմ ստացել, այդ աշակերտով նամակ ուղարկեցի և այլն: Ինչպես տեսնում

— Ժամանակակից հայոց լեզուն գրաբարից ժառանգել է Բ-Յ հոլովման պատկանող մի խումբ բառեր, որոնք ընդհանրապես որոշյալ հոդ չեն ստանում ոչ մի հոլովաձևում, սակայն գործածվում են թե՛ որոշյալ իմաստով և թե՛ անորոշ իմաստով: Այս յուրահատկությունը գալիս է գրաբարից, որը դեռևս լիովին չէր տարբերակել անորոշի և որոշյալի քերականական կարգերը:

Ընք, յաշակերտ բառը խոսքի մեջ իր երկու ձևերում՝ ուղիղ ձևում և տրականի ձևում, գործածվում է միայն որոշյալ հոգով, որովհետև առարկան հայտնի է, և այն չի կարող գործածվել իբրև անորոշ, սակայն սեռական, բացառական, գործիական և ներգոյական հոլովների ձևերով կարող է գործածվել, որովհետև այս հոլովները իրենց անփոփոխ մեկ ձևով կարող են և՛ որոշյալ իմաստով գործածվել, և՛ անորոշ իմաստով: Հետևաբար դժվար չէ հասկանալ, որ անորոշ տրականը չի կարող որոշյալ լինել:

Այսպիսի բացատրություն մենք տալիս ենք նրանց, որոնք հայերեն չգիտեն, իսկ հայերեն իմացող լեզվաբանին, որը սեռական հոլովի դոյությունը չի ընդունում, կհարցնենք՝ եթե սեռականը անորոշ տրական է, ապա մենք ինչպե՞ս ենք ճանաչում մարդկանց և առարկաները, երբ, օրինակ, ասում ենք՝ Լևոնի Բայրը, Տիգրանի եղբայրը, Չարենցի ոտանավորը, Հովհաննես Ռումանյանի «Անուշը», Հայաստանի մայրաքաղաքը և այլն: Պարզ չէ՞, որ եթե Լևոնի, Տիգրանի, Չարենցի, Հովհաննես Ռումանյանի, Հայաստանի գոյականներն անորոշ լինեին, մենք չպետք է կարողանայինք ճանաչել այն մարդկանց ու առարկաները: որոնց մասին խոսք եղավ, և որոնք պատկանում, վերաբերում են սեռական հոլովով դրված գոյականներին: Բայց բարեբախտաբար մենք այդ մարդկանց ու առարկաները ճանաչում ենք, որովհետև սեռականի այդ ձևը ամենևին էլ անորոշ չէ, անորոշ տրական համարվել չի կարող:

Սեռական հոլովը ժամանակակից հայոց լեզվում կոչված է կատարելու յուրահատուկ շարահյուսական ֆունկցիա: Սեռականը միակ հոլովն է, որով դրված առարկան անմիջական հարաբերության մեջ է մտնում մի այլ առարկայի հետ՝ ցույց տալով երկու առարկաների անմիջական առնչություն, մի բան, որից դուրկ են մյուս հոլովները, որոնցով դրված առարկան մի այլ առարկայի կապվում է բայի միջնորդությամբ:

Քանի որ խոսք եղավ գոյականի որոշյալի և անորոշի քերականական կարգի մասին, անհրաժեշտ ենք գտնում այս առիթով անելու ևս մի դիտողություն: Խոսքի մեջ որոշյալ իբրև կամ անձը կարող է գործածվել իբրև անորոշ, խոսողի տեսակետից անորոշ և, ընդհակառակն, անորոշ առարկան կարող է առնչվել իբրև որոշյալ: Որոշյալ իբրև կամ անձը խոսքի մեջ գործածվում է անորոշ իմաստով, հետևաբար և անորոշ ձևով, այն դեպքում, երբ խոսողը չճանաչելու է տալիս հայտնի առարկան կամ անձնավորությունը՝ արտահայտելով իր արհամարհական վերաբերմունքն այդ առարկայի կամ անձնավորության նկատմամբ: Այսպես, օրինակ, Հովհ. Ռումանյանի «Անուշ» պոեմի հետևյալ հատվածում վիճակ, դուրվիչ և անեծք գոյականները, թեև խոսքից արդեն հայտնի առարկաներ են, գործածված են անորոշ իմաստով, անորոշ նշանակությամբ, որովհետև խոսողները դրանց նկատմամբ արհամարհական վերաբերմունք ունենալով՝ այդ առարկաները չճանաչելու են տալիս:

Ասում են՝ մի օր, ես օրորոցում,
Մի պառավ դարվիչ մեռ դուռն է գալի,
Իր խաղն ասում է ու բաժին ուզում,
Իմ նաեր նրան բաժին չի տալի:
— Իո՞րի, ասում է, կորի մեռ դռնից,
Երեխաա նախկ. հետքի՞ր. գնա...
Ու դարվիչն էնտեղ անիծում է ինձ,
Թե՛ որա օրը լացով անց կենա...

Ա՛խ, էն դարվիշի անեծքին անգուր
 Ու էս վիճակին տեղյակ է ասումած.
 Սիրտս էլ միշտ փակ, սիրտս էլ միշտ մո՛ւր,
 Ի՛նչ կա, չգիտեմ, իմ առջև սլահված...
 — Մի տրտմի՛ր, Անուշ, մի լինի՛ր հսմառ.
 Մեր ձեռքով հանած մի անմիտ վիճ՝Ակ,
 Մի խելառ ԴԱՐՎԻՇ, մի ԱՆԵԾՔ հիմար,
 Ու դու լալիս ես էղպես սրտանա՛հ...
 ...

Անորոշ առարկան կարող է դիտվել իբրև որոշյալ այն դեպքում, երբ այն առնվում է իբրև տվյալ տեսակի անվանում։ Օրինակ՝ գայլը գազան է, խաղողը միրգ է և այլն, ուր գայլը թեև կոնկրետ որևէ գայլ չի նշանակում, սակայն առնված է իբրև այդ կենդանու տեսակի անվանում, ուստի և ունի որոշյալ նշանակություն, խաղողը թեև կոնկրետ խաղող չի նշանակում, սակայն առնված է իբրև մրգի այդ տեսակի անվանում, ուստի և որոշյալ նշանակություն ունի։

Ժամանակակից հայոց լեզվում սեռական հոլովի գոյությունն այսպիսով համարում ենք ասլացուցված, ուստի մանրամասնությամբ չենք անդրադառնում մեր լեզվի զարգացման պատմության փաստերին, որոնք ևս անառարկելիորեն հաստատում են մեր եզրակացությունները, իսկ դրանք հետևյալն են.

1. Սեռական հոլովը արդի հայերենի հոլովների համակարգում գրավում է իր հատուկ տեղը. նա իր ձևաբանական (և հատկապես ձևաբանական) ու շարահյուսական առանձնահատկություններով հակադրվում է թե՛ տրական հոլովին և թե՛ մյուս հոլովներին և ծառայում է արտահայտելու առարկաների այնպիսի հարաբերություն, որի համար չի կոչված հայերենի հոլովներից և ոչ մեկը։ Ծիշտ է, սեռական հոլովը ձևով նման է անորոշ տրականին, սակայն ունություն չէ, անորոշ տրական չէ. նա ձևաբանական մի կարևոր հատկանիշով տարբերվում է անորոշ տրականից՝ նրանով, որ իր միակ ձևով սեռականը կարող է արտահայտել և՛ անորոշի իմաստ, և՛ որոշյալի իմաստ, մի բան, որ չի կարող արտահայտել անորոշ տրականը։

2. Անձնական դերանունների ԻՄ, ՔՈ, ՆՐԱ, ՄԵՐ, ՁԵՐ՝ մի կողմից, և ԻՆՁ, ՔԵՁ, ՆՐԱՆ, ՄԵՁ, ՁԵՁ՝ մյուս կողմից, ձևերի հակադրությունը արդի հայերենում պատահական բան չէ։ Անձնական դերանունների ԻՄ, ՔՈ, ՆՐԱ, ՄԵՐ, ՁԵՐ ձևերը սեռական հոլովաձևեր են և գործածվում են նույն կիրառություններով, ինչ որ գոյականի սեռական հոլովաձևերը, իսկ ԻՆՁ, ՔԵՁ, ՆՐԱՆ, ՄԵՁ, ՁԵՁ ձևերը՝ տրական հոլովաձևեր և գործածվում են նույն կիրառություններով, ինչ որ գոյականի տրական հոլովաձևերը։ Ուստի ԻՄ, ՔՈ, ՆՐԱ, ՄԵՐ, ՁԵՐ հոլովաձևերը ոչ կարծեցյալ ստացական դերանուններ են, ոչ էլ վերապրուկային հոլովաձևեր, այլ անձնական դերանունների սեռական հոլովի լիարժեք ձևեր։

3. Ժամանակակից հայերենը մշակել է գոյական անվան որոշյալի և անորոշի քերականական կարգ, որն արտահայտվում է գոյականի երկու ձևերի հակադրությամբ։ Որոշ հոլովներ (գոյականի ուղիղ ձևերը և տրականի ձևերը) ունենում են կա՛մ որոշյալ ձև (որոշյալ Ը կամ Ն հոդով), կա՛մ անորոշ ձև (առանց որոշյալ հոդի), ըստ որում որոշյալ ձևը ունենում է միայն որոշյալ իմաստ, իսկ անորոշ ձևը՝ միայն անորոշ իմաստ։ Մյուս հոլովները՝ սեռականը, բացառականը, գործիականը և ներգոյականը, որոշյալ հոդ չեն ստանում, բայց և այնպես սոսկ անորոշ չեն։ Այս հոլովաձևերը իրենց մեկ ձևով կարող են արտահայտել թե՛ որոշյալի իմաստ և թե՛ անորոշի։

РОДИТЕЛЬНЫЙ ПАДЕЖ В СОВРЕМЕННОМ АРМЯНСКОМ ЯЗЫКЕ

П. М. ПОГОСЯН

(Р е з ю м е)

Исследуя грамматическую категорию определенности и неопределенности существительного в современном армянском языке, автор статьи разделяет падежи на две группы:

1. Падежи, в которых существительные выступают в двух формах с соответствующими значениями—или в определенной форме со значением определенности, или неопределенной форме со значением неопределенности;

2. Падежи, в которых существительные выступают только в одной форме — без определенного артикля, но со значением или определенности, или неопределенности.

Дательный падеж принадлежит к первой группе, так как во всех своих употреблениях он выступает или в определенной форме, выражая грамматическое значение определенности (*մոտեցա ծառին*), или в неопределенной форме, выражая грамматическое значение неопределенности (*մոտեցա ծառի*). Таким свойством обладает и прямая форма существительного. Значение определенности определяется детерминантами *այս, այդ, այն* и другими словами, а значение неопределенности определяется детерминантами *ինչ-որ, որևէ, մի* и другими словами.

Определенная форма дательного падежа может дополняться лишь определенными детерминантами, а неопределенная форма—только детерминантами, имеющими неопределенное значение (*մոտեցա այս, այդ, ծառին*, но *մոտեցա ինչ-որ, որևէ, մի ծառի*).

Дательному падежу противопоставляются падежи второй группы—родительный, исходный, творительный и местный. Существительное в этих падежных формах в одном и том же сочетании может определяться и определенными, и неопределенными детерминантами (ср. *այս, այդ, այն ծառի ճյուղը* — с определенными детерминантами и *ինչ-որ, որևէ, մի ծառի ճյուղ* — с неопределенными детерминантами). Здесь форму *ծառի* нельзя назвать неопределенной, так как она может выражать грамматическое значение определенности. Таким свойством обладают другие падежи второй группы.

Основываясь лишь на внешнем сходстве формы родительного с формой неопределенного дательного, языковеды — сторонники пяти падежей не смогли оценить сущность этой важной для современного армянского языка грамматической категории, следовательно, и не видят существенного различия между родительным и дательным падежами.